8657

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«01» 06 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0069-22

Ձեռնարկողը՝ *«Սուն Սոլար» ՍՊԸ*
Վայոց ձորի մարզ, Ք. Վայք, Ջերմուկի խճ. 14/48

Գործունեությունը՝ ***Հերիեր համայնքի փարածքում արևային ֆոտովոլտային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Վայոց ձորի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0069-22

«01» 06 2022թ.

Վայոց ձորի մարզի Հերհեր համայնքի տարածքում արևային ֆոտովոլտային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Սուն Սոլար» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծեր
Գործունեության կատեգորիա՝	«Բ»
Տեղադրման վայրը՝	Վայոց ձորի մարզի Ջերմուկ խոշորացված համայնքի Հերհեր բնակավայր, Վայք համայնքի Արին բնակավայր

«Սուն Սոլար» ՍՊԸ կողմից ներկայացված նախագծով նախատեսվում է Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի, Հերհեր բնակավայրի տարածքում՝ Վառված սարի 5 և 6 հողամասերում արևային ֆոտովոլտային կայանի և Արին բնակավայրում 110կՎտ էլեկտրահաղորդման գծերի կառուցում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի՝ 14-րդ հոդվածի, 5-րդ մասի, 3-րդ կետի գ ենթակետի նախատեսվող արևային կայանի և 110կՎտ օդային գծի կառուցման նախատեսվող գործունեությունը դասակարգվում է Բ կատեգորիայի:

Նկարագրական մաս. Գործունեությունն իրականացվելու է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020թ. մարտի 25-ի, 86Ա որոշման համաձայն, «Սուն Սոլար» ՍՊ ընկերությանը տրամադրված 5ՄՎտ հզորությամբ ԼԷ №0671 էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիայի (մինչև 2041թ. դեկտեմբերի 10-ը գործողության ժամկետով), Ջերմուկ համայնքի ղեկավարի կողմից 2021թ. նոյեմբերի 3-ին տրամադրված N28 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականներով ամրագրված՝ 2.52հա և 2.7հա մակերեսով հողամասերում, որոնց նպատակային նշանակությունն էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի:

Նախագծի իրականացման նպատակն է՝ ապահովել Հանրապետության էներգամատակարարման հեռանկարային պահանջարկը, կառուցելով ժամանակակից հագեցվածությամբ արևային կայան:

Համաձայն հաշվետվության նախատեսվող արևային կայանի շրջանը բնութագրվում է լեռնային կտրտված ռելիեֆով: Լեռնագրական տեսակետից տարածքը տեղակայված է Վայքի գոգահովտում, որը բոլոր կողմերից եզրագծվում է Վայքի, Զանգեզուրի, Թեքսարի, Վարդենիսի լեռնաշղթաներով: Կայանի տեղադիրքը գտնվում է ծովի մակերևույթից 2184մ բարձրության վրա: Նախատեսվող գործունեության տարածքը հիմնականում բուսազուրկ է,

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

սակայն շրջակայքում առկա են առանձին տեղամասեր, որոնք ծածկված են գաճաճ անտառով և թփուտներով: Տարածքի հիմնական ջրահոսքն Արփա գետն է:

Տեղանքի համար առավելագույն ցածր ջերմաստիճանը -21° է, բարձրը՝ +39°, քամու առվելագույն արագությունը հասնում է 24մ/վ-ի: Ձյան ծածկույթի առավելագույն բարձրությունը 41սմ է: Տարվա ընթացքում անարև օրերի քանակը 36 օր է, արևափայլը՝ տարեկան 2515ժամ:

Համաձայն հաշվետվության նախատեսվող գործունեության տարածքը բնության հատուկ պահպանվող տարածքների հետ անմիջական սահմաններ չունի, դեպի հյուսիս-արևելք գտնվում են՝ «Ջերմուկի ջրաբանական», «Ջերմուկի անտառային», «Հերհերի նոսրանտառային» և «Եղեգիս» պետական արգելավայրերը՝ 5-15կմ հեռավորության վրա:

Մարզի կենդանական և բուսական աշխարհը հարուստ է ու բազմազան, համաձայն տեղեկատվության գործունեության բուն տարածքում հանդիպում է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված «Սապսան» թռչնատեսակը: Հաշվի առնելով տեսակի առկայությունը հաշվետվությունում նախատեսվել է համապատասխան պահպանության միջոցառումներ:

Նախատեսվող արևային կայանի տեխնիկական ցուցանիշներն են՝

- Արևային ֆոտովոլտային վահանակների քանակը 10166 հատ է, յուրաքանչյուրը 535Վտ առավելագույն հզորությամբ, որոնք 20 հատ 250կՎտ ելքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխներով միանալու են ենթակայանի 0.8կՎ լարման գլխավոր ընդունիչ վահանակներին (մեկ մոդուլի չափը 2285x1134x35մմ):
- Արևային կայանի տեղադրման համար նախատեսվում է կառուցել մետաղական կոնստրուկցիաներով հարթակներ՝ 60x40x2.5մմ, 60 x40 x2մմ, 60 x30 x2.5մմ, 40x40x2.5մմ և 30 x30 x2.5մմ ուղանկյուն խողովակներով, որոնք ամրացվելու են բետոնե գլանաձև հիմքերով 250մմ տրամագծով և 1400մմ երկարությամբ ամրաններով:
- Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվելու են կոնստրուկցիայով հորիզոնի նկատմամբ 28° թեքվածությամբ, գետնից առնվազն 100սմ բարձրության վրա: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35մ/վ քամու արագության համար: 250կՎտ հզորությամբ փոխակերպիչները ունեն 20-ական հաստատուն հոսանքի մուտք, որին միացվում են 20 հատ զուգահեռ շղթաներ (String)՝ 26 հատ հաջորդաբար միացված ֆոտովոլտային պանելներով:
- Մոդուլների և փոխակերպիչների համար նախատեսված են MC4 տիպի կոնեկտորներ: Շղթաների զուգահեռ միացումներն ապահովված է փոխակերպիչներում, յուրաքանչյուր 20 շղթայի համար նախատեսված է առանձին փոխակերպիչ: Ընտրվել են 535Վտ առավելագույն հզորությամբ բազմաբյուրեղ JAM72D30-535MB մոդելի ֆոտովոլտային մոդուլներ: Փոխակերպիչները SOLIS արտադրության՝ 28 մուտքերով:
- Յուրաքանչյուր փոխակերպիչից դեպի ՏԵ-ի ցածր լարման վահաններին էլեկտրամատակարարումն իրականացվելու է ստորգետնյա, զրահապատ, ալյումենե 3x95մմ² հատույթով մալուխագծով:
- Հողանցման կոնտուրն իրականացվելու է հողի շերտից 0.9մ խորությամբ անցկացված 4x40մմ շերտապողպատով և 2մ երկարություն ունեցող 50x50x5մմ պողպատե անկյունակներով: Արևային ֆոտովոլտային էկեկտրակայանի /այսուհետ՝ ԱՖԷԿ/ բոլոր հենակառուցվածքները, կերպափոխիչները, մետաղական արկղերը հողանցվելու են:
- ԱՖԷԿ 10կվ ցանցին միանալու է 6300կՎԱ/35/0,8կվ տրանսֆորմատորի միջոցով, օգտագործվելու է նաև 25կՎԱ/0.8/0,4կվ լարման տրանսֆորմատոր՝ սեփական կարիքների համար:
- Համաձայն օդային գծի և ենթակայանի կառուցման նախագծերի կայանին հարակից տարածքում նախատեսվում է կառուցել 0,8կՎ-10կՎ, 10կՎ-110կՎ լարման բարձրացման ենթակայաններ, վերջինից արտադրված հզորությունը նախատեսվում է միացնել «Ջերմուկ» 110կՎ օդային գծի մոտակա խարսխային հենարանին, կառուցելով մոտ 10000մ 110կՎ օդային

ՓՈՐՁԱՐԱՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

գիծ: Օդային գիծը նախատեսվում է երկշղթա՝ գիծ-1 և գիծ-2, որոնք ունեն ընդհանուր հենարաններ (N-1 -- N74): Օդային գիծը Հերհեր համայնքից անցնելու է Արին բնակավայրով, վերջնակետը լինելու է Մալիշկա բնակավայրը, որտեղ օդային գիծը միանալու է ենթակայանին:

Համաձայն հաշվետվության նախատեսվող 5ՄՎտ հզորությամբ արևային կայանն առաջին տարվա ընթացքում միջինը կարտադրի 11.455.000կՎտժ էլեկտրաէներգիա, ինչը նախատեսվում է վաճառել Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ին:

Հաշվետվությամբ նախատեսվում է ԱՖԷԿ-ի տարածքի 2մ բարձրությամբ մետաղացանցով ցանկապատում, արտաքին լուսավորության ցանցի և տեսանկարահանող սարքերի տեղադրում:

Համաձայն հաշվետվության գործունեության ենթակա տարածք մոտեցնող ճանապարհը գոյություն ունեցող են, նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել նախապատրաստական աշխատանքներ՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- պահեստային և մոնտաժային հարթակների կարգավորում,
- ժամանակավոր տնակների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- ջրի պահեստային բաքի տեղադրում,
- կեղտաջրերի հավաքման ժամանակավոր տարողության տեղադրում
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքերի, հաստատուն հոսանքի մալուխների, փոփոխական հոսանքի մալուխների անցկացման խրամուղիների, հողանցման կոնտուրի, ենթակայանի տեղադրման և ցանկապատման ու արտաքին լուսավորման հողային աշխատանքներ: Հաշվարկներն իրականացվել են ըստ նախագծային լուծումների, համաձայն որի հողի հանույթի ընդհանուր ծավալը կազմում է 2300մ^3, որից հողակցման աշխատանքներինը՝ 500խմ, հիմքերի և խրամուղիների փորում՝ 1800 խմ, արևային կայանի հարթակների պատրաստումից առաջ տարածքի հողի բերրի շերտը հավաքվելու և ժամանակավոր պահվելու է ՀՀ կառավարության որոշման պահանջների համաձայն, բերրի հողն անմիջապես ետ է փռվելու հենասյունների տեղադրումից հետո:

Համաձայն հաշվետվության կայանի ամբողջ շինարարական աշխատանքները տևելու են 21 ամիս՝ ըստ ժամանակացույցի: Շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկական և տրանսպորտային միջոցներ՝ 1 հորատող, 1 բուլդոզեր, 2 ինքնաթափ և այլն:

Շինարարության ընթացքում ջուրն օգտագործվելու է հրապարակների՝ ջրցանի, փորվող հանվող հողի/գրունտի խոնավացման, ինչպես նաև անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Ջուրը բերվելու Ջերմուկի համայնքային ջրատարից, ջրատար մեքենաներով և պահեստավորվելու է բաքերի մեջ: Տաք եղանակային պայմաններում իրականացվելու է օրական երկու անգամ ջրցան, ինչի համար ջրապահանջը հաշվածկվել է 555.7խմ:

Շինարարության փուլի կեղտաջրերի հավաքման համար նախատեսվում է տեղադրել անթափանց պատերով ստորգետնյա տարողություն, որի ծավալը՝ 20խմ, թույլ կտա ապահովել առնվազն 20 օրյա աշխատանք: Հորի դատարկումը կիրականացվի ամսեկան երեք անգամ, հատուկ մեքենաներով, որոնք կտեղափոխվեն կոյուղաջրերը մոտակա կոյուղու ցանց:

Համաձայն հաշվետվության կայանի շահագործման ընթացքում օդային ավազանի աղտոտման մակարդակը գնահատվում է ցածր: Ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում ավտոմեքենաների և շինանարարական աշխատանքից, ինչը

կրելու է ժամանակավոր բնույթ:

Արևային կայանի շահագործման ընթացքում հնարավոր վթարների կամ ենթակայանի հնարավոր վերանորոգման ժամանակ առաջանալու են վտանգավոր թափոններ՝ հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր՝ 5տ/տարի քանակով, ինչպես նաև յուղոտված լաթեր, ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ, յուղերով աղտոտված ավազ, սև մետաղի ջարդոն: Վտանգավոր նյութերը և մետաղական թափոնները տրամադրվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար:

Հաշվետվությունում ներառված է զրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

Համաձայն հաշվետվության շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կներառեն՝ օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսներ վտանգավոր նյութերի, այդ թվում տրանսպորտային միջոցներից և սարքավորումներից յուղերի հնարավոր ներթափանցման կանխարգելմանը, տարածքի կենսաբազմազանության պահպանման, ՀՀ Կարմիր գրքերում հաշվառված բուսական և կենդանական տեսակների հայտնաբերմանն ու դրանց պահպանմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են հաշվետվության միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Մասնավորապես.

- օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարել գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,
- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կատարվելու է այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,
- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,
- տարածքում նութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,
- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:
- հանված բուսահողը պահեստավորվելու է անմիջական հորատանցքերի հարևանությամբ, պահվելու է ծածկված վիճակում, այն օգտագործվելու է անմիջապես տեղում՝ տարածքի բարեկարգման համար,
- շինարարական տեխնիկայի և սարքավորումների լիցքավորումը, վերանորոգումը կատարվելու է գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտացված մեքենաներով,
- գործունեության ենթակա տարածքում կենսաբազմազանության հայտնաբերման և դրանց պահպանման անհրաշետությունից ելնելով նախատեսվում է մշակել գործողությունների պլան, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից,
- ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում՝

02543163 ՓՈՐՁԱՓՐԱՍՏԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

ընկերությունը նախօրոք առանձնացնելու է հատուկ պահպանման գոտի՝ վերջիններիս տեղափոխելու և վերատնկելու համար,

- նախքան աշխատանքների մեկնարկը, բուն տեղամասը և նրա շրջակայքը հետազոտվելու են կենդանաբանների կողմից՝ բացառելու կամ հայտնաբերելու համար ՀՀ Կարմիր գրքում գրանցված «Սապսան» կենդանատեսակը և նրա բնադրավայրերը: Հատուկ ուշադրություն է դարձվելու հատկապես առկա ժայռային միջավայրերին, խորշերին և ժայռաքիվերին: Սապսան կենդանատեսակի բնադրավայրեր հայտնաբերելու դեպքում իրականացվելու են հետևյալ միջոցառումները.
- բնադրման և թխսման ժամանակաշրջանում դադարեցվելու են տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները,
- տարածքները, որտեղ կհայտնաբերվեն թռչնի բներ, որոնց մեջ կլինեն ձվեր կամ ձագեր, առհասարակ դադարեցվելու են ցանկացած տիպի աշխատանքները մինչ նրանց չվելը,
- անտրոպոգեն ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար հողաշինարարական աշխատանքներն իրականացվելու են ուշ աշնան և ձմռան ամիսներին,
- ամբողջ աշխատանքների ընթացքում հնարավորինս նվազեցվելու են աղմուկն ու լուսավորությունը,
- շինարարական թափոնները և կենցաղային աղբը՝ բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն կտեղափոխվեն և կտեղադրվեն համայնքի կողմից հատկացված վայրում,
- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ խառնվելու են և տեղափոխվելու են աղբավայր,
- շինարարության ընթացքում պահպանվելու են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և այլն:

Արևային կայանի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, օգտագործված, գոյություն ունեցող ճանապարհի կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով, իսկ վերին մասը ծածկվելու է բուսահողով:

Համաձայն հաշվետվության շահագործման ժամկետի ավարտից հետո ընկերությունը հետագա շահագործման հնարավորությունների բացակայության պայմաններում կատարելու է կայանի սարքավորումների ապամոնտաժում և տարածքի նախկին տեսքի բերում: Գործողությունները կատարվելու է համայնքի վերահսկողությամբ:

Կայանի կառուցման, փորձարկման և գործարկման համար անհրաժեշտ ընդհանուր ներդրման գումարը կազմում է մոտ 1895 մլն. ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակներում իրականացվել է արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ, որի հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան արևային կայանի շինարարության և շահագործման ընթացքում: Մշակվել են այդ ազդեցությունները կանխարգելող կամ մեղմող միջոցառումներ, ինչպես նաև այդ միջոցառումների արդյունավետության վերահսկման և մոնիթորինգի ծրագիր:

Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը զգալի չէ և կրում է ժամանակավոր բնույթ:

Այսպիսով իրականացվող աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության,

գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Վայոց ձորի մարզպետարանը, Ջերմուկի, Վայքի, Եղեգնաձորի համայնքապետարանները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Վայոց ձորի մարզի Հերհեր, Արին և Մալիշկա բնակավայրերում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական գործընթացում կատարվել են ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներ և հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Փորձաքննական պահանջներ

- Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում, անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների /հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն և այլն/ մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհաանվտանգության և սանիտարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող գործունեության տարածքում, ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված «Սապսան» թռչնատեսակի բների հայտնաբերման դեպքում, որտեղ կլինեն ձվեր կամ ձագեր, անհապաղ դադարեցնել ցանկացած տիպի աշխատանքները և դիմել լիազոր մարմնին:
- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում՝ առաջնորդվել ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Արևային կայանի շահագործման ժամկետի ավարտից հետո հետագա գործունեությունն իրականացնել համաձայն հաշվետվությունում ամրագրված միջոցառումների:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սուն Սոլար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Վայոց ձորի մարզի Հերհեր համայնքի տարածքում արևային ֆոտովոլտային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Ա. Վարդանյան